

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Ընթացիկ իրավիճակը և նախագծի ընդունման անհրաժեշտությունը.

«Պետական տուրքի մասին» օրենքի 21-րդ հոդվածով սահմանվում են պետական տուրքի գծով արտոնությունների տեսակները. դրանք են՝ պետական տուրքի վճարումից ազատումը, պետական տուրքի նվազեցումը, պետական տուրքի դրույքաչափի նվազեցումը, պետական տուրքի վճարման ժամկետի հետաձգումը և պետական տուրքը սահմանված ժամկետում բյուջե չգանձելու համար հաշվարկված տույժերի վճարումից ազատումը, նվազեցումը, դրանք վճարելու ժամկետի հետաձգումը:

Միաժամանակ, «Պետական տուրքի մասին» օրենքի 22-րդ հոդվածով սահմանված դատարաններում պետական տուրքի վճարումից ազատման հիմքերի ուսումնասիրությունը թույլ է տալիս արձանագրել, որ դրանք մեծամասամբ կապված են կա՛մ առավել խոցելի խմբերի իրավունքների պաշտպանության, կա՛մ վտանգավորության բարձր մակարդակ կա՛մ ծանր հետևանքներ առաջացնող խախտումների հետ: Կարող ենք արձանագրել նաև, որ սահմանված հիմքերը հաճախ կապվում են հենց պետության կողմից հիմնարար իրավունքների խախտման հետևանքով պատճառված վնասների հատուցման հետ, այնուամենայնիվ հիմնարար իրավունքների խախտման մի շարք դեպքեր կարող են դուրս մնալ օրենքով կանխորոշած շրջանակից:

Ինչ վերաբերում է պետական տուրքի վճարման ժամկետի հետաձգմանը, որպես պետական տուրքի գծով արտոնության տեսակ, հարկ է նշել, որ գործող օրենսդրությամբ սահմանված չեն պետական տուրքի վճարման ժամկետի հետաձգման պարտադիր հիմքեր, այդ թվում՝ մարդու հիմնարար իրավունքների խախտման արդյունքում ոչ նյութական վնասի հատուցման հայցերով պետական

տուրքի վճարման ժամկետի հետաձգման համար: Ուստի՝ հայցվորները պետական տուրքի ժամկետի հետաձգումից կարող են օգվել միայն պետական տուրքի վճարումը հետաձգելու վերաբերյալ միջնորդության բավարարման դեպքում: Այսինքն, պետական տուրքի հետաձգման հնարավորությունը մեծապես կախված է դատարանի հայեցողությունից և չի պարունակում հստակ չափանիշներ:

Արդյունքում առաջանում է մի իրավիճակ, երբ անձանց համար ծանր հետևանքներ առաջացնող և հիմնարար իրավունքների խախտումների հետևանքով պատճառված ոչ նյութական վնասի հատուցման բազմաթիվ դեպքեր ներառված չեն պետական տուրքի գծով արտոնությունների՝ օրենքով նախատեսված ազատման պարտադիր հիմքերում, ինչպես նաև չեն հանդիսանում օրենքով ուղղակիորեն ամրագրված պետական տուրքի վճարման հետաձգման հիմք, այդ թվում՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայով սահմանված իրավունքների և ազատությունների խախտման հետևանքով պատճառված ոչ նյութական վնասի պահանջի հայցերով:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների խախտման հետ կապված հայցերի համար պետական տուրքի վճարման ժամկետի հետաձգումը բխում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայից և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի ընդհանուր տրամաբանությունից, որոնք առանցքային են համարում արդար դատաքննության իրավունքի բաղադրատարր հանդիսացող արդարադատության մատչելիության ապահովումը: Այս առումով, հարկ է անդրադարձ կատարել «Կրեուզն ընդդեմ Հեհասպրանի» գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշմանը, որով դատարանը վճռել է, որ դիմումատուի՝ հայց ներկայացնելու համար վճարը նվազեցնելու մերժումը անհամաչափորեն սահմանափակում է

վերջինիս՝ դատարանի մատչելիության իրավունքը՝ խախտելով Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածը¹:

Վերոգրյալով պայմանավորված և հիմք ընդունելով «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը և դրանից բխող 2020-2022 թվականների և 2023-2025 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» Կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 1978-Լ որոշման 3-րդ հավելվածով հաստատված Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2023-2025թթ. գործողությունների ծրագրի 3.5-րդ գործողությունը («Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում նախատեսել արտոնություն՝ պետական տուրքի վճարումից ազատելու ձևով, հայցվորներին բոլոր հիմնարար իրավունքի խախտման հետևանքով պատճառված վնասի, այդ թվում՝ ոչ նյութական (բարոյական) վնասի փոխհատուցման պահանջի հայցերով՝ ի ապահովումն անձի իրավունքի պաշտպանության արդյունավետության)՝ առաջարկվել է «Պետական տուրքի մասին» օրենքի 22-րդ հոդվածում ընդլայնել պետական տուրքի արտոնությունից օգտվելու դեպքերը՝ ներառելով նաև պետության կողմից հիմնարար իրավունքների խախտման հետևանքով պատճառված վնասի հատուցման հայցերով պետական տուրքի վճարման ժամկետի հետաձգումը:

2. Առաջարկվող կարգավորման բնույթը.

««Պետական տուրքի մասին» օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) առաջարկվել է «Պետական տուրքի մասին» օրենքի 22-րդ հոդվածում նախատեսել պետական տուրքի վճարման ժամկետի հետաձգում՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 162.1-ին հոդվածի 2-րդ մասով նախատեսված հիմնարար իրավունքների

¹ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի «Կրեուզն ընդդեմ Լեհաստանի» (*Kreuz v. Poland*) գործով վճիռը (զանգատ թիվ 28249/95), 2001թ., § 67:

խախտման հետևանքով պատճառված ոչ նյութական վնասի հատուցման հայցերով, եթե նախաքննության մարմինը, դատախազը կամ դատարանը հաստատել է պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի որոշման, գործողության կամ անգործության հետևանքով իրավունքի խախտման փաստը:

Մասնավորապես, Նախագծով լրացուցիչ երաշխիք է նախատեսվում անձի արդար դատաքննության իրավունքի իրացման համար՝ հնարավորություն տալով հայց ներկայացնել՝ առանց հայց ներկայացնելու պահին վճարում կատարելու կաշկանդվածության:

3. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք.

Նախագիծը մշակվել է ՀՀ արդարադատության նախարարության կողմից:

4. Ակնկալվող արդյունքը.

Նախագծով առաջարկվող կարգավորումների միջոցով հնարավոր կլինի Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 162.1-ին հոդվածի 2-րդ մասով նախատեսված հիմնարար իրավունքների խախտման հետևանքով պատճառված ոչ նյութական վնասի հատուցման հայցերով երաշխիքներ սահմանել արդար դատաքննության իրավունքի մաս կազմող դատարանի մատչելիության իրավունքի լիարժեք իրացման համար՝ կապված գործերի բնույթի, դիմող սուբյեկտների և պաշտպանվող իրավունքի տեսակի հետ:

5. Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ.

Նախագծի ընդունումը բխում է Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2023-2025 թվականների գործողությունների ծրագրի 3.5-րդ գործողությունից: